ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ
2013 թվականի ներդրումային գործունեության
մոնիթորինգի արդյունքները

ԵՐԵՎԱՆ 2014

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Նախաբան…… 4

ԲԱԺԻՆ 1.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2013 թվականի

ներդրումային ծրագրի կառուցվածքը……5

ԲԱԺԻՆ 2.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2013 թվականի

ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները և

ներդրումների ձևավորման աղբյուրները……8

2.1 Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները……8

2.2 Ներդրումների ձևավորման աղբյուրները ……10

ԲԱԺԻՆ 3.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2013 թվականի

ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները ……12

3.1 Սպասարկման որակի բարելավմանն ուղղված ներդրումներ……12

3.2 Նոր սպառողների միացում և հատուկ ծրագրեր ……16

3.2.1 Նոր սպառողների միացմանն ուղղված ներդրումներ…… 16

3.2.2 Հատուկ ծրագրերի իրականացմանն ուղղված ներդրումներ ……16

3.3 Առևտրային հաշվառման համակարգի բարելավման

ուղղությամբ կատարված ներդրումներ……17

3.4 Բաշխիչ ցանցերի շահագործման կազմակերպման

համար այլ ուղղություններով կատարված ներդրումներ ……17

ԲԱԺԻՆ 4.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից

իրականացված գնումների մոնիթորինգի արդյունքները ……19

4.1 Ապրանքների շուկայական գների մոնիթորինգ ……19

4.2 Ծառայությունների շուկայական գների մոնիթորինգ ……20

ԲԱԺԻՆ 5.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին հետագա սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը……21

5.1 Ներդրումային ծրագրի շրջանակում իրականացված ներդրումներից նվազեցված ներդրումների ծավալը ……21

5.2 Անհետաձգելի աշխատանքների իրականացման նպատակով կատարված ներդրումներից նվազեցված ներդրումների ծավալը……24

5.3 Սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը……25

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ……27

Հղումներ օգտագործված նյութերին ……31

ՆԱԽԱԲԱՆ

Սույն վերլուծական տեղեկանքը կազմվել է ի կատարումն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետև՝ Հանձնաժողով) 2013 թվականի դեկտեմբերի 18-ի №459Լ որոշումով հաստատված 2014 թվականի աշխատանքային ծրագրի 23-րդ կետի և արտացոլում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) 2013-2015 թվականների ներդրումային ծրագրի 2013 թվականի հատվածի (այսուհետ՝ Ներդրումային ծրագիր) մոնիթորինգի գնահատականը: Վերլուծական տեղեկանքում ներկայացված է Ներդրումային ծրագրի և փաստացի կատարված ներդրումների համադրությունը, դրանց արդյունավետության վերլուծությունը, ինչպես նաև սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի գնահատականը: Վերլուծական տեղեկանքը կազմվել է՝ հաշվի առնելով Ընկերության 2013-2015 թվականների Ներդրումային ծրագիրը [Որոշում 1, Որոշում 2] և վերջինիս կողմից հանձնաժողով ներկայացված հաշվետվություններն ու տեղեկատվությունները [Հաշվետվություն 1], [Տեղեկատվություն 1, 2, 3, 4]: Հաշվի է առնվել նաև Ընկերության 2015 թվականի հունվարի 22-ի №04-ԵԲ-05/99 գրությունով ներկայացված առարկություններն ու առաջարկությունները:

ԲԱԺԻՆ 1.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2013 թվականի ներդրումային ծրագրի կառուցվածքը

Ընկերության Ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսված էր տարբեր միջոցառումներ իրականացնել բաշխիչ ցանցերի վերակառուցման և վերազինման ուղղությամբ՝ սպառողների սպասարկման որակի ցուցանիշների, էլեկտրամատակարարման հուսալիության և անվտանգության աստիճանի պատշաճ մակարդակի պահպանման նպատակով: Նախատեսված էր ներդրումներ իրականացնել նաև բաշխիչ ցանցերի ընդլայնման, բաշխիչ ցանցերի շահագործման կազմակերպման և ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով՝ հատուկ մեքենաների և մեխանիզմների, համակարգչային տեխնիկայի, գրասենյակային գույքի, արտադրական և վարչական շենքերի ու շինությունների վերակառուցման, ինչպես նաև չափիչ սարքերի և գործիքների ձեռքբերման ուղղություններով՝ ընդհանուր առմամբ 7 505,67[1] մլն դրամ ծավալով:

Գրաֆիկ 1-ում ներկայացված է Ընկերության Ներդրումային ծրագրի ծավալների բաշխումը հիմնական ուղղությունների միջև:

Ինչպես երևում է Գրաֆիկ 1-ից, ներդրումների հիմնական մասը՝ շուրջ 59,5%-ը, նախատեսված էր նոր սպառողների միացման և հատուկ ծրագրերի իրականացման նպատակով, որից շուրջ 54,6%-ը նախատեսված էր ներդնել նոր սպառողների սպառման համակարգերը էլեկտրական ցանցին միացնելու ուղղությամբ, իսկ 4,9%-ը՝ Երևան քաղաքում և մարզերում 17 հասցեական աշխատանքների իրականացման ուղղությամբ:

Ներդրումների հաջորդ հիմնական հատվածը՝ շուրջ 27,9%-ը, նախատեսված էր ուղղել սպասարկման որակի ցուցանիշների բարելավմանը՝ մալուխային, օդային գծերի և ենթակայանների վերակառուցմանն ու վերազինմանը, ինչպես նաև բազմաբնակարան շենքերի մուտքերում էլեկտրամատակարարման ցանցի բարելավմանը, այլ անձանց պատկանող ենթակայանների ձեռքբերմանը, ինչպես

[1] Սույն վերլուծական տեղեկանքում ներկայացված բոլոր գումարները չեն ներառում ավելացված արժեքի հարկը:

նաև Երևանի քաղաքապետարանի հետ համատեղ ծրագրով՝ մալուխների անցկացման համար պահուստային խողովակների տեղադրմանը:

Գրաֆիկ 1



Առևտրային հաշվառման համակարգի բարելավմանն ուղղությամբ, որին բաժին է ընկնում ընդհանուր ծրագրի 5,3%-ը, նախատեսված էր փոխարինել կամ տեղակայել նոր հաշվիչներ և հաշվիչների արկղեր՝ էլեկտրաէներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով դրանց ներկայացվող պահանջների ապահովման նպատակով: Նախատեսվում էր նաև շարունակել էլեկտրաէներգիայի հաշվառման համակարգի ավտոմատացման աշխատանքները:

Ներդրումային ծրագրի՝ բաշխիչ ցանցերի շահագործման կազմակերպման համար այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներով, որոնք կազմում են 547,42 մլն դրամ կամ ընդհանուր ներդրումների 7,3%-ը, նախատեսված էր ձեռք

բերել՝ 23,09 մլն դրամի՝ գրասենյակային գույք, 107,02 մլն դրամի՝ համակարգչային տեխնիկա և համալրող սարքավորումներ, 55,00 մլն դրամի՝ չափիչ սարքեր և գործիքներ, 286,92 մլն դրամի՝ հատուկ մեքենաներ և մեխանիզմներ: Վարչական շենքերի և շինությունների վերակառուցման համար նախատեսվում էր իրականացնել 25,40 մլն դրամի ներդրումներ, իսկ տրանսպորտային միջոցների վերասարքավորման և ամբողջական վերականգնման համար՝ 50,00 մլն դրամի ներդրումներ:

ԲԱԺԻՆ 2.
«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2013 թվականի ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները և ներդրումների ձևավորման աղբյուրները

2.1 Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները

Համաձայն Ընկերության փաստացի իրականացված ներդրումների մասին հաշվետվության՝ 2013 թվականի ընթացքում իրականացվել են 9 079,38 մլն դրամի ներդրումներ (ավարտված և անավարտ աշխատանքների գումարային արժեք): Սակայն, հաշվետվությամբ ներկայացված ներդրումների ծավալում Ընկերությունը ներառել է նաև սակագնի ծախսային հոդվածներով փոխհատուցվող 868,88 մլն դրամի աշխատանքներ, որոնք ներդրումներ չեն հանդիսանում: Բացի այդ, Ընկերության կողմից իրականացվել են 185,82 մլն դրամի անհետաձգելի աշխատանքներ, որոնք Ներդրումային ծրագրի մաս չեն հանդիսանում:

Հաշվի առնելով վերը նշվածը, Ընկերության կողմից 2013 թվականի համար հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների՝ համադրելի ծավալը կազմել է 8 024,68 մլն դրամ, ինչ էլ դիտարկվել է Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշների վերլուծության ընթացքում: Նշված ծավալից շահագործման հանձնված հիմնական միջոցների արժեքը կազմել է 6 257,62 մլն դրամ, իսկ մնացած 1 767,06 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ, կամ ավարտվել են սակայն դեռևս չեն մասնակցում լիցենզավորված գործունեությանը:

Ինչ վերաբերում է անհետաձգելի աշխատանքների իրականացմանն ուղղված ներդրումներին, ապա դրանք ևս դիտարկվել է սույն վերլուծական տեղեկանքում՝ առանձին, սակագնային մարժայով փոխատուցման ենթակա ներդրումների ծավալի որոշման ընթացքում: Վերլուծական տեղեկանքի այդ հատվածում Ընկերության փաստացի իրականացված ներդրումների ծավալը ընդունվել է հավասար 8 210,50 մլն դրամի, շահագործման հանձնված հիմնական միջոցների արժեքը կազմել է 6 443,44 մլն դրամ:

Այս համատեքստում հարկ է նաև նշել, որ ընկերության կողմից հանձնաժողով ներկայացված ֆինանսական հաշվետվությունների համաձայն, վերջինիս անավարտ

ոչ ընթացիկ նյութական ակտիվների արժեքը 2013 թվականի սկզբին կազմել է 2 956.72 մլն դրամ: Տարվա ընթացքում այն աճել է 1 993, 17 մլն դրամով, տարեվերջին կազմելով 4 949,89 մլն դրամ, կամ շահագործման հանձնված հիմնական միջոցների արժեքի (6 443,44 մլն դրամ) շուրջ 77%-ը:

Ստորև՝ աղյուսակ 1-ում, ներկայացված է հանձնաժողովի հետ համաձայնեցված և ընկերության կողմից փաստացի ավարտված ներդրումների ծավալների համեմատականը:

Աղյուսակ 1

N	Ներդրումների ուղղությունները	Հանձնաժողովի հետ համաձայնեցված 2013 թվականի ներդրումների կանխատեսվող ծավալը		2013 թվականի ընթացքում փաստացի ավարտված ներդրումների ծավալը		Ներդրու-մային ծրագրի կատարման ցուցանիշը
		մլն դրամ	%	մլն դրամ	%	%
1	Սպասարկման որակի ցուցանիշների բարելավում	2,094.0	27.9%	1,393.1	22.3%	66.5%
2	Նոր սպառողների միացում և հատուկ ծրագրերի իրականացում	4,468.7	59.5%	4,064.8	65.0%	91.0%
3	Առևտրային հաշվառման համակարգի բարելավում	395.5	5.3%	296.7	4.7%	75.0%
4	Գրասենյակային գույքի ձեռքբերում	23.1	0.3%	26.1	0.4%	113.2%
5	Համակարգչային տեխնիկայի և աքսեսուարների ձեռքբերում	107.0	1.4%	71.8	1.1%	67.1%
6	Տրանսպորտային միջոցների վերասարքավորում և ամբողջական վերականգնում	50.0	0.7%	40.4	0.6%	80.8%
7	Հատուկ մեքենաների և մեխանիզմների ձեռքբերում	286.9	3.8%	286.9	4.6%	100.0%
8	Վարչական շենքերի և շինությունների վերակառուցում	25.4	0.3%	25.3	0.4%	99.5%
9	Չափիչ սարքերի և գործիքների ձեռքբերում	55.0	0.7%	52.6	0.8%	95.6%
10	**Ընդամենը**	**7,505.7**		**6,257.6**		**83,4%**

Ինչպես տեսնում ենք Աղյուսակ 1-ից, Ներդրումային ծրագիրն Ընկերությունը կատարել է 83,4%-ով: Չնայած այդ հանգամանքին, սպառողների սպասարկման որակի բարելավման ուղղությամբ ներդրումներն իրականացվել են 66,5%-ով:

2.2 Ներդրումների ձևավորման աղբյուրները

Ստորև ներկայացված է 2013 թվականի ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացված ներդրումների (անավարտ և ավարտված) ձևավորման աղբյուրները:

Աղյուսակ 2
(մլն դրամ)

N	Ներդրումների ձևավորման աղբյուրները	Ավարտված և անավարտ աշխատանքների արժեքը		Ավարտված աշխատանքների արժեքը	
		մլն դրամ	%	մլն դրամ	%
1	Նախորդ ժամանակահատվածի անավարտ աշխատանքներ	363.48	4.53%	363.48	5.81%
2	Կապալառու կազմակերպությունների միջոցով կատարված աշխատանքներ	4,087.17	50.93%	2,529.66	40.43%
3	Տեղակայում չպահանջող հիմնական միջոցներ	694.52	8.65%	694.52	11.10%
4	Սեփական ուժերով կատարված աշխատանքներ, այդ թվում՝	2,879.50	35.88%	2,669.96	42.67%
4.1	*աշխատանքի վարձատրության գծով ծախսեր*	*276.61*	*3.45%*	*274.23*	*4.38%*
4.2	*հումք և նյութեր*	*1,966.39*	*24.50%*	*1,791.75*	*28.63%*
4.3	*տեղակայման ենթակա սարքավորումներ*	*589.25*	*7.34%*	*556.73*	*8.90%*
4.4	*այլ*	*47.25*	*0.59%*	*47.25*	*0.76%*
5	**Ընդամենը**	**8,024.68**	**100%**	**6,257.62**	**100%**

Ինչպես տեսնում ենք Աղյուսակ 2-ից, ներդրումները իրականացվել են ինչպես կողմնակի կազմակերպությունների միջոցով, այնպես էլ սեփական ուժերով: Տեղակայում չպահանջող հիմնական միջոցները ներդրումների ծավալում ունեն անհամեմատ փոքր կշիռ: Ներդրումների ընդհանուր ծավալում փոքր է նաև նախորդ ժամանակահատվածում անավարտ մնացած աշխատանքների արժեքը, որոնք Ընկերությունն ավարտել է 2013 թվականի ընթացքում:

ԲԱԺԻՆ 3.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2013 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները

3.1 Սպասարկման որակի բարելավմանն ուղղված ներդրումներ

Սպասարկման որակի բարելավման նպատակով Ընկերության Ներդրումային ծրագրի շրջանակում նախատեսվում էր իրականացնել 2 094,0 մլն դրամի ներդրումներ՝ բաշխիչ ցանցերի լարման տարբեր մակարդակներում օդային և մալուխային գծերի, ենթակայանների վերանորոգման և վերակառուցման, ինչպես նաև բազմաբնակարան շենքերի մուտքերում էլեկտրական ցանցերի բարեկարգման նպատակով: Փաստացի իրականացվել են 1 658,35 մլն դրամի աշխատանքներ, որի արդյունքում շահագործման են հանձնվել 1 393,12 մլն դրամի հիմնական միջոցներ:

Ընկերության հուսալիության ցուցանիշների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ էլեկտրական ցանցերում անջատումները հիմնականում բաժին են ընկնում 0,4-6(10) կՎ լարման ցանցերին: Այդ հանգամանքը հաշվի առնելով՝ 2013 թվականի ներդրումային ծրագրի շրջանակներում սպասարկման որակի բարելավմանն ուղղված ներդրումների մոտ 90%-ը նախատեսվել էր իրականացնել 0,4-6(10) կՎ լարման բաշխիչ ցանցերում: 2013 թվականին 0,4-6(10) կՎ լարման ցանցերում իրականացված ներդրումներից շահագործման են հանձնվել 1 230,75 մլն դրամի հիմնական միջոցներ, որը կազմում է այս ուղղությամբ իրականացված ընդհանուր ներդրումների 88,64%-ը: Ուստի Ընկերությունը ներդրումներն իրականացրել է հաշվի առնելով բաշխիչ ցանցերում անջատումների հիմնական պատճառ հանդիսացող էլեկտրակայանքների փոխարինման և վերակառուցման առաջնահերթությունը:

Սպասարկման որակի ցուցանիշների բարելավման ուղղությամբ Ընկերության 2013 թվականի ներդրումային գործունեության արդյունքները գնահատելու նպատակով համեմատվել է 0,4-6(10) կՎ լարման ցանցերում 2013-2014 թվականների առաջին եռամսյակում գրանցված հրաժարումների քանակը [Տեղեկատվություն 4]: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ եթե 2013

թվականի առաջին եռամսյակում գրանցվել է 1112[2] հրաժարում, ապա 2014 թվականի նույն ժամանակահատվածում հրաժարումների թիվը նվազել է 25%-ով և կազմել է 829: Հրաժարումների քանակի նվազումը կարող է պայմանավորված լինել նաև շահագործման արդյունավետության բարձրացմամբ, քանի որ իրականացված ներդրումների ծավալը չէր կարող հանգեցնել նման բարելավման: Այնուամենայնիվ հարկ է արձանագրել, որ 2013 թվականի ընթացքում բոլոր գործոնների համալիր ազդեցությունը հանգեցրել է հրաժարումների քանակի նվազման:

Դիտարկվել է նաև սպասարկման որակի ցուցանիշների փոփոխությունը 2013 թվականի ընթացքում: Ստորև՝ աղյուսակ 3-ում ներկայացվում է 2013 թվականի ընթացքում սպառողների հոսանքազրկումների միջին հաճախության և տևողության փաստացի ցուցանիշների համեմատությունը 2012 թվականի փաստացի ցուցանիշների հետ:

Աղյուսակ 3

Մարզ, Համայնք	**Հոսանքազրկումների միջին հաճախություն* (հոսանքազրկում/սպառող)**			**Հոսանքազրկումների միջին տևողություն (րոպե/սպառող)**		
	2012թ. փաստացի	2013թ. փաստացի	(3)-ը (2)-ի նկատմամբ	2012թ. փաստացի	2013թ. փաստացի	(6)-ը (5)-ի նկատմամբ
1	2	3	4	5	6	7
Երևան	3.93	4.21	-7.29%	200.31	258.01	-28.80%
Արարատ	0.77	0.49	35.44%	87.09	38.18	56.16%
Վայոց Ձոր	3.22	1.67	48.10%	235.86	75.96	67.79%
Արագածոտն	3.84	2.73	28.83%	422.62	273.57	35.27%
Արմավիր	4.18	3.37	19.37%	450.46	310.07	31.17%
Կոտայք	4.24	3.96	6.62%	393.42	381.26	3.09%
Գեղարքունիք	4.30	4.35	-1.09%	571.80	491.73	14.00%
Տավուշ	2.33	1.85	20.57%	217.97	134.21	38.42%
Շիրակ	2.72	2.25	17.20%	270.98	225.52	16.78%
Սյունիք	1.81	1.68	6.85%	164.02	186.48	-13.70%
Լոռի	4.57	4.13	9.69%	439.46	407.18	7.35%

[2] 0.4 կՎ լարման օդային և մալուխային գծերի հրաժարումները չեն դիտարկվել:

* Հոսանքազրկումների թվում հաշվի են առնվել արտապլանային նորոգումների և հրաժարումների ցուցանիշները:

Ինչպես երևում է Աղյուսակ 3-ից, հանրապետության գրեթե բոլոր մարզերում՝ բացառությամբ Երևան քաղաքի և Սյունիքի մարզի (ավելացել է միայն հոսանքազրկումների տևողությունը), հոսանքազրկումների միջին հաճախության և տևողության ցուցանիշները նախորդ տարվա համեմատությամբ բարելավվել են: Երևան քաղաքում սպասարկման որակի ուղղությամբ իրականացված 231,04 մլն դրամի ներդրումների արդյունավետությունը գնահատելու նպատակով ուսումնասիրվել են նաև 2014 թվականի հոսանքազրկումների միջին տևողության և հաճախության ցուցանիշները, որոնք 2013 թվականի համեմատ նվազել են համապատասխանաբար 19,4%-ով և 16,0%-ով:

Բացի վերը նշվածը, ուսումնասիրվել է նաև հանրապետության բնակավայրերի թիվը ըստ մարզերի, որտեղ 2013 թվականի ընթացքում էլեկտրամատակարարման ընդհատումներ չեն գրանցվել (հաշվի չի առնվել 2013 թվականի նոյեմբերի 2-ի էլեկտրամատակարարման համակարգային խոշոր ընդհատումը):

Աղյուսակ 4

Մարզ, համայնք	Բնակավայրերի քանակը	Բնակավայրերի քանակը, որտեղ 2013 թվականին ընդհատումներ չեն գրանցվել	%
Արագածոտն	119	13	10.9%
Արարատ	98	2	2.0%
Արմավիր	98	8	8.2%
Գեղարքունիք	97	3	3.1%
Լոռի	124	11	8.9%
Կոտայք	69	0	0.0%
Շիրակ	130	4	3.1%
Սյունիք	134	15	11.2%

Վայոց Ձոր	54	6	11.1%
Տավուշ	65	5	7.7%
Ընդամենը	**988**	**67**	**6.8%**

Ինչպես երևում է Աղյուսակ 4-ից, ՀՀ մարզերի 988 բնակավայրերից 67-ում 2013 թվականի ընթացքում էլեկտրամատակարարման ընդհատումներ չեն գրանցվել: Հարկ է նշել, որ 2012 թվականի ընթացքում ընդհատումներ չգրանցած բնակավայրերի թիվը կազմել է 79, 2011 թվականի ընթացքում՝ 180, իսկ 2010 թվականին՝ 205: Ուստի հարկ է փաստել նաև, որ Ընկերության կողմից Հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության որակը՝ սպասարկման որակի ցուցանիշների մասով նախորդ տարիների համեմատությամբ բարելավվել է: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ անջատումներ չգրանցած բնակավայրերից 21-ը Ընկերությունում գրանցված են այլ սպառիչների (համայնքների) անուններով, 16-ը՝ էլեկտրաֆիկացված չեն կամ բնակչություն չկա, 8-ը՝ վերանվանվել են, իսկ 4 բնակավայրեր սնվում են այլ սպառողների ենթակառուցվածքներով: Առավել հստակ տեղեկատվություն ստանալու համար անհրաժեշտ է Ընկերության բազայում իրականացնել համապատասխան փոփոխություններ:

Հոսանքազրկումների միջին տևողության և հաճախականության ցուցանիշների պահպանման, անվտանգության ապահովման և մաշված սարքավորումների փոխարինման ուղղությամբ նախատեսված էր նաև 200,62 մլն դրամի ներդրումներ իրականացնել բազմաբնակարան շենքերի մուտքերում էլեկտրական ցանցի բարեկարգման նպատակով: Ներդրումներն իրականացվել են ամբողջ ծավալով, որի արդյունքում 257 շենքերում (որից 203-ը Երևանում և 54-ը մարզերում) բարեկարգվել են 535 մուտքեր:

Թույլատրելի սահմաններից էլեկտրաէներգիայի լարման շեղման միջին հաճախության և տևողության կրճատման ուղղությամբ Ներդրումային ծրագրի նախնական տարբերակով (մինչև 2013 թվականի դեկտեմբերի 4-ի N427Ա որոշումով իրականացված փոփոխությունը) նախատեսված էր իրականացնել թվով 13 հասցեական աշխատանքներ՝ 338,30 մլն դրամ ծավալով: 2013 թվականին

իրականացվել է ընդհամենը մեկ հասցեական աշխատանք՝ 25,91 մլն դրամ ծավալով՝ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքում: Թույլատրելի սահմաններից էլեկտրաէներգիայի լարման շեղման միջին հաճախության և տևողության կրճատման ուղղությամբ այլ ներդրումներ ենթաուղղությամբ նախատեսված 130,00 մլն դրամի ներդրումների շրջանակում ևս որևէ աշխատանք չի իրականացվել:

3.2 Նոր սպառողների միացմանը և հատուկ ծրագրերի իրականացմանն ուղղված ներդրումներ

3.2.1 Նոր սպառողների միացմանն ուղղված ներդրումներ

Նոր սպառողների սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման ուղղությամբ 2013 թվականին նախատեսվում էր ներդնել 4 100,00 մլն դրամ: Իրականցվել է 5 476,76 մլն դրամի ներդրումներ, որից փաստացի շահագործման են հանձնվել 3 996,26 մլն դրամի հիմնական միջոցներ:

Հարկ է նշել, որ համաձայն Հանձնաժողով ներկայացվող նոր սպառողների միացման գծով իրականացված ծախսումների վերաբերյալ տեղեկավության [Տեղեկատվություն 1] մատակարարման պայմանագիր կնքած բաժանորդների մասով Ընկերության իրականացրած ներդրումները կազմել են 2 922,55 մլն դրամ:

Արդյունքում՝ 2013 թվականի ընթացքում էլեկտրական ցանցին են միացվել 4261 նոր բաժանորդներ, ևս 175-ի միացման աշխատանքներն ավարտվել են և ներկայացվել էլեկտրամատակարարման պայմանագիր կնքելու առաջարկներ:

Հարկ է նաև նշել, որ ցանցին միացված նոր բաժանորդների մասով ընկերության կողմից գանձվել են 692,80 մլն դրամի միացման վճարներ, որոնք ենթակա են նվազեցման ներդրումների ծավալից:

3.2.2 Հատուկ ծրագրերի իրականացմանն ուղղված ներդրումներ

Հատուկ ծրագրերի իրականացման ուղղությամբ 2013 թվականին նախատեսված էր ներդնել 368,71 մլն դրամ՝ 0,4/6(10) կՎ լարման օդային և մալուխային գծերի, ինչպես նաև ենթակայանների վերակառուցման ուղղությամբ թվով 16 հասցեական աշխատանքների իրականացման նպատակով: Արդյունքում

16-ից միայն 7-ում են իրականացվել աշխատանքներ՝ ընդհանուր 68,53 մլն դրամ ծավալով: Մնացած 9 ենթաուղղություններով ներդրումներ չեն իրականացվել:

3.3 Առևտրային հաշվառման համակարգի բարելավման ուղղությամբ կատարված ներդրումներ

Ներդրումային ծրագրի հաջորդ՝ առևտրային հաշվառման համակարգի բարելավման ուղղությամբ նախատեսվում էր իրականացնել 395,53 մլն դրամի ներդրումներ: Այդ նպատակով պետք է փոխարինվեին հետագա շահագործման համար ոչ պիտանի հաշվիչները, կատարելագործվեր առևտրային հաշվառման համակարգը (տեղադրվեին և փոխարինվեին տեղեկատվության ավտոմատ փոխանցման սարքավորումներ) և տեղակայվեին հաշվիչների նոր արկղեր՝ հաշվառման սարքերի մեխանիկական վնասվածքները և կողմնակի անձանց միջամտությունը դրանց միացման սխեմային կամ աշխատանքին բացառելու, ինչպես նաև սպառողների և ընկերության ներկայացուցիչների համար հաշվիչի ցուցմունքի տեսանելիությունը, դրանց շահագործման և պահպանման անվտանգությունն ապահովելու նպատակով:

Համաձայն ներկայացված հաշվետվության, այս ուղղությամբ ընկերության կողմից շահագործման հանձնված ներդրումները կազմել են 296,66 մլն դրամ, այդ թվում՝

- հաշվիչների փոխարինման նպատակով՝ 101,64 մլն դրամ, որից 41,42 մլն դրամը սպառողների համար միաֆազ էլեկտրոնային բազմասակագնային հաշվիչների տեղակայման նպատակով,
- հաշվիչների արկղերի տեղադրման նպատակով՝ 113,02 մլն դրամ,
- 110-6(10) կՎ լարման ցանցերում էլեկտրական էներգիայի ավտոմատ հաշվառման համակարգի համալրման նպատակով՝ 82,00 մլն դրամ:

3.4 Բաշխիչ ցանցերի շահագործման կազմակերպման համար այլ ուղղություններով կատարված ներդրումներ

Ներդրումային ծրագրի այս ուղղությունով նախատեսվում էր.

- գրասենյակային գույքի ձեռքբերում՝ 23,09 մլն դրամ արժեքով: Այս նպատակով փաստացի ձեռք է բերվել 26,12 մլն դրամի ապրանքներ.
- համակարգչային տեխնիկայի և համալրող սարքավորումների ձեռքբերում՝ 107,02 մլն դրամ արժեքով: Փաստացի ձեռք է բերվել 71,77 մլն դրամի համակարգիչներ, մոնիտորներ, անխափան սնուցման և այլ համալրող սարքավորումներ.
- տրանսպորտային միջոցների վերասարքավորում (գազաբալոնների տեղադրում) և շահագործումից հանված տրանսպորտային միջոցների ամբողջական վերականգնում՝ ընդհանուր 50,00 մլն դրամ արժեքով: Փաստացի 9,98 մլն դրամ ներդրվել է 17 ավտոմեքենայի վերասարքավորման ուղղությամբ, իսկ 30,40 մլն դրամ ներդրվել է 14 բեռնատար մեքենա-մեխանիզմների ամբողջական վերականգնման ուղղությամբ.
- հատուկ մեքենաների և մեխանիզմների ձեռքբերում՝ 286,92 մլն դրամ արժեքով: Փաստացի 286,92 մլն դրամով ձեռք է բերվել 16 ուղևորաբեռնատար, 1 բեռնատար ավտոմեքենաներ և 4 մեքենա-մեխանիզմներ.
- վարչական շենքերի և շինությունների վերակառուցում՝ 25,40 մլն դրամ արժեքով: Այս ենթաուղղությամբ 2013 թվականի ընթացքում ներդրվել է 25,27 մլն դրամ.
- չափիչ սարքերի և գործիքների ձեռք բերում՝ 55,00 մլն դրամ արժեքով: Ներդրումների փաստացի ծավալը կազմել է 52,60 մլն դրամ՝ այդ թվում 28,05 մլն դրամով ձեռք է բերվել 51 հատ լարման չափման և վերահսկման սարքեր:

ԲԱԺԻՆ 4.
«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի իրականացված գնումների մոնիթորինգի արդյունքները

4.1 Ապրանքների շուկայական գների մոնիթորինգ

Ընկերության կողմից ձեռք բերված ապրանքների շուկայական գների մոնիթորինգը ցույց է տալիս, որ սարքավորումների ձեռք բերման գները միջինում 20%-ով գերազանցում են շուկայականը: Նման գերազանցումները, մեր կարծիքով, հետևանք են մի շարք գործոնների, մասնավորապես՝

ա) ապրանքները ձեռք են բերվում ոչ թե արտադրող կազմակերպություններից, ինչն ավելի տրամաբանական կլիներ ձեռք բերվող ապրանքների քանակի և արժեքի պարագայում, այլ տեղական միջնորդ կազմակերպություններից: Արդյունքում նշված կազմակերպությունները ապրանքի ինքնարժեքին ավելացնում են նաև իրենց ծախսերը և շահույթը, ինչն էլ բացասական է ազդում արդեն իսկ Ընկերության կողմից ձեռք բերվող ապրանքների գների վրա.

բ) մատակարարված ապրանքների դիմաց Ընկերությունը վճարումները կատարում է լավագույնը 90 բանկային օր հետո, ինչը մատակարարների մոտ առաջացնում է կապիտալի ներգրավման լրացուցիչ ծախսեր: Սա ևս ապրանքների թանկացմանը հանգեցնող լրացուցիչ գործոն է: Եթե տեղական շուկայում առկա կարճաժամկետ վարկերի միջին տարեկան տոկոսադրույքն ընդունենք 16%, ապա միայն այս գործոնի կշիռը կկազմի 4%:

գ) միջնորդ կազմակերպությունների կարողությունները արտաքին շուկաների ուսումնասիրության և այդ շուկաներում ներկայանալու ներուժի առումով անհամեմատ սահմանափակ են, քան Ընկերությանը, ինչը ևս իր ազդեցությունն է ունենում ապրանքների ձեռքբերման գների և արտադրողների ընտրության հարցում.

դ) որոշ սարքավորումների ձեռքբերման մրցույթները հայտարարվել են դրանց տեղակայման աշխատանքների հետ միասին, որը լրացուցիչ արգելք է հանդիսացել արտադրող ընկերությունների համար մրցույթներին մասնակցելու առումով և անհիմն խոչընդոտել է մրցակցային միջավայրի ձևավորմանը:

4.2 Ծառայությունների շուկայական գների մոնիթորինգ

Կապալառու կազմակերպությունների կողմից իրականացված աշխատանքների ընտրանքային մոնիթորինգի արդյունքում պարզվել է, որ դրանց գները միջինում 13,72%-ով գերազանցում են շուկայականը: Նշված գերազանցումները հետևանք են մի շարք գործոնների, մասնավորապես.

ա) փաստացի կատարված աշխատանքների արժեքի նկատմամբ կիրառվում են նախահաշվային տոկոսներ,

բ) ընկերության կողմից ոչ միշտ են կապալառուին տրամադրվում աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ նյութերը և սարքավորումները: Արդյունքում կապալառուները դրանց արժեքի նկատմամբ կիրառում են վերադիր ծախսեր և շահույթ, ինչը կապալառուների տեսանկյունից բնական է: Սակայն այդ նյութերն ու սարքավորումները Ընկերության կողմից տրամադրվելու դեպքում դրանց նկատմամբ կապալառուների կողմից վերադիր ծախսերի և շահույթի լրացուցիչ տոկոսներ չէին հաշվարկվի.

գ) կապալառուների կողմից այդ աշխատանքների իրականացման նպատակով մանրածախ շուկայից ձեռքբերվող ապրանքների գները բարձր են Ընկերության կողմից կենտրոնացված կարգով կատարվող գնումների արդյունքում ձեռք բերված ապրանքների գներից: Մասնավորապես՝ կապալառուների կողմից հաղորդալարերի և մալուխների ձեռքբերման գները 30%-ից 40%-ով գերազանցում են դրանց շուկայական գները:

ԲԱԺԻՆ 5.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետագա սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

5.1 Ներդրումային ծրագրի շրջանակում իրականացված ներդրումներից նվազեցված ներդրումների ծավալը

Ընկերության կողմից 2013 թվականի ընթացքում փաստացի ավարտված 6 257,62 մլն դրամի ներդրումների ծավալում առկա են ներդրումներ, որոնք ենթակա չեն փոխհատուցման Ընկերության սակագնային մարժայով, քանի որ.

1. աշխատանքի վարձատրության գծով իրականացված ծախսումներից 274,23 մլն դրամ (Աղյուսակ 2) նվազեցվել է սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից, քանի որ Ընկերության աշխատակիցների աշխատավարձերն արդեն իսկ ամբողջությամբ ներառված են սակագնային մարժայի ծախսերի հատվածում.
2. սպասարկման որակի բարելավման ուղղությամբ կատարված 6(10)-0,4 կՎ լարման մալուխային և օդային գծերի վերակառուցման աշխատանքներում ներառվել են աշխատանքներ, որոնք համաձայն Ընկերության 2012 թվականի հունվարի 20-ի 04ՎՍ-05/182 գրությամբ ներկայացված 6(10)-0,4 կՎ լարման օդային և մալուխային գծերի կապիտալ ծախսերի ճանաչման հայտանիշների՝ պետք է ձևակերպվեին որպես ընթացիկ ծախսեր: Դրանք են մալուխային գծերի մինչև 50մ հատվածի փոխարինման աշխատանքները, իսկ օդային գծերի համար՝ մինչև 200մ երկարությամբ գծի նորոգման կամ մինչև 5 հենասյան փոխարինման աշխատանքները: Այս ուղղությամբ նվազեցվող ներդրումները կազմել են 76,33 մլն դրամ.
3. նոր սպառողների միացման ուղղությամբ իրականացված ներդրումների ծավալի որոշման համար հիմք է ընդունվել էլեկտրամատակարարման պայմանագիր կնքած սպառողների մասով իրականացված աշխատանքների ծավալը: Արդյունքում, փաստացի իրականացված ներդրումների մասին հաշվետվության համաձայն՝ շահագործման հանձնված 4017,78 մլն դրամից

818,52 մլն դրամ նվազեցվել է սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից: Նվազեցվել են նաև էլեկտրական ցանցին միացված նոր սպառողների միացման համար գանձված 692,80 մլն դրամի միացման վճարները.

4. 110-6(10) կՎ լարման ցանցերում էլեկտրական էներգիայի ավտոմատ հաշվառման համակարգի համալրման նպատակով 82,00 մլն դրամի ներդրումների շահագործման մեջ գտնվելու փաստը հիմնավորված չէ, ուստի դրանք նվազեցվել են սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից.
5. տարբեր լարման ցանցերում տեղակայված սարքավորումների (ՇՀՕ, ՅԱՌՎ, ՌԼՆԴ,ՎՌՈՒ, ՇՌՍ, ԿՍՕ, ԼՏԵ և ՏՄ) մասով կատարված 603,56 մլն դրամի ներդրումներից շուկայական գների մոնիթորինգի արդյունքում իրականացված ներդրումների ծավալից նվազեցվել է 113,02 մլն դրամ (Բաժին 4.1).
6. տեղակայված էլեկտրոնային բազմասակագնային հաշվիչների ձեռքբերման գների մոնիթորինգի արդյունքում փաստացի կատարված 145,65 մլն դրամի ներդրումներից նվազեցվել է 23,19 մլն դրամ, որից 15.78 մլն դրամի ներդրումները ձեռք բերված բազմասակագնային էլեկտրոնային հաշվիչներին ներկայացվող՝ ՀՀ էներգետիկայի նախարարի 1999 թվականի հունիսի 22-ի հրամանի 6.9 կետի, տեխնիկական պահանջները չբավարարելու պատճառով (Բաժին 4.1).
7. տեղակայված հաշվիչների արկղերի շուկայական գների ուսումնասիրության և ընկերության ձեռքբերման գների համադրության արդյունքում՝ կատարված 212,58 մլն դրամի ներդրումներից նվազեցվել է 13,91 մլն դրամ: Այս ենթաուղղությամբ իրականացված ներդրումների ծավալից նվազեցվել են նաև հաշվիչների արկղերի հիմնանորոգման աշխատանքների արժեքը 11,93 մլն դրամ ծավալով, քանի որ վերջինիս իրականացման համար համապատասխան միջոցներ են ներառվել սակագնային մարժայի ծախսերի հատվածում (Բաժին 4.1).

8. կապալառու կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների արժեքի շուկայական գների գերազանցման պատճառով ներդրումների ծավալից նվազեցվել է դրանց 13.72%-ը կամ 209,58 մլն դրամ (Բաժին 4.2).
9. նախագծման աշխատանքների մասով նվազեցվել են 14.89 մլն դրամի ներդրումներ, քանի որ դրանց հետ կապված կամ աշխատանքներ չեն իրականացվել կամ այդ աշխատանքների արժեքները անհամեմատ փոքր են նախագծով նախատեսվածից (ենթադրաբար դրանք իրականացվել են մասնակի): Նշված ծախսերը սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում կներառվեն նախատեսված աշխատանքների ավարտից և շահագործման հանձնելուց հետո.

Բացի վերը նշվածը, իրականացվել է նաև Հանձնաժողովի հետ համաձայնեցված և փաստացի իրականացված ներդրումների ծավալի համադրում: Համադրման ընթացքում Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալը համեմատվել է փաստացի իրականացված ներդրումների ծավալի հետ՝ վերը նշված նվազեցումների իրականացումից հետո: Արդյունքում, Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցվել է շուրջ 9,18 մլն դրամով, հետևյալ ենթաուղղություններով.

- ենթակայանի անվտանգության պարագաների ձեռքբերում՝ 1,62 մլն դրամ,
- եռաֆազ հաշվիչի համար 1 տեղանոց արկղերի տեղադրում՝ 0,67 մլն դրամ,
- միաֆազ հաշվիչի համար 2 տեղանոց արկղերի տեղադրում՝ 4,10 մլն դրամ,
- գրասենյակային գույքի ձեռքբերում՝ 2,79 մլն դրամ:

Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցող ներդրումները ևս նվազեցվել են սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Հարկ է նաև նշել, որ թույլատրելի սահմաններից էլեկտրաէներգիայի լարման շեղման միջին տարեկան հաճախության և տևողության կրճատման ուղղությամբ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքում իրականացված 25,91 մլն դրամի ներդրումները ևս նվազեցվել են փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից՝ դրանց արդյունավետությունը հավաստող հիմնավորումներ չներկայացնելու պատճառով:

5.2 Անհետաձգելի աշխատանքների իրականացման նպատակով կատարված ներդրումներից նվազեցված ներդրումների ծավալը

Ընկերության կողմից 2013 թվականի ընթացքում անհետաձգելի աշխատանքների իրականացման նպատակով կատարված 185.82 մլն դրամ ներդրումների ծավալում առկա են ներդրումներ, որոնք ենթակա չեն փոխհատուցման ընկերության սակագնային մարժայով, քանի որ.

1. Գեղարքունիք մարզում քամու հետևանքով վթարված «Կապուտակ» 110 կՎ օդային գծի ուղղությամբ իրականացված 122,12 մլն դրամի անհետաձգելի աշխատանքներից կապալառու ընկերության կողմից իրականացված 107,06 մլն դրամի ներդրումների նկատմամբ կիրառվել է 8,22%՝ հաղորդալարերը շուկայականից ավելի բարձր գնով ձեռք բերելու պատճառով, որի արդյունքում 8,80 մլն դրամի ներդրումներ նվազեցվել են սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից (Բաժին 4.2).
2. անհետաձգելի աշխատանքների մնացած 63,71 մլն դրամի շրջանակներում շահագործման են հանձնվել թվով 286 աշխատանքներ: Այս աշխատանքներից նվազեցվել է 29,26 մլն դրամ, քանի որ դրանց մի մասը չի դիտարկվել որպես անհետաձգելի աշխատանք, իսկ մյուս մասը՝ դիտարկվել է որպես ընթացիկ ծախսեր (Բաժին 5.1.2): Եվս 4,21 մլն դրամ նվազեցվել է, որպես աշխատավարձի մասով ծախսումներ (Բաժին 5.1.1):

Արդյունքում՝ ներդրումային ծրագրի շրջանակներից դուրս իրականացված անհետաձգելի աշխատանքներից միայն 143,54 մլն դրամի ներդրումներն են ներառվել սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում:

5.3 Սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

Հաշվի առնելով մոնիթորինգի արդյունքները, ստորև՝ աղյուսակ 5-ում ներկայացված է Ընկերության կողմից 2013 թվականին փաստացի իրականացված և հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի գնահատականը:

Աղյուսակ 5
(մլն դրամ)

1	2013 թվականի ընթացքում իրականացված ներդրումների ընդհանուր ծավալը	**8 210.499**
2	2013 թվականի ընթացքում ավարտված ներդրումների ծավալը	**6 443.444**
3	Իրականացված ներդրումներից նվազեցման ենթակա ներդրումները, այդ թվում	**2 407.744**
3.1	Վերլուծության արդյունքում նվազեցված ներդրումներ	**1 714.939**
3.1.1	Աշխատանքի վճարման գծով ծախսումներից	**274.228**
3.1.2	0,4-6(10) կՎ լարման օդային և մալուխային գծերի վերակառուցման (մինչև 0,5 մլն դրամ արժողությամբ) աշխատանքներից	**76.325**
3.1.3	Նոր սպառողների էլեկտրատեղակայանքները ցանցին միացնելուն ուղղված ներդրումներից (չմիացված բաժանորդների մասով)	**818.518**
3.1.4	110-6(10) կՎ լարման ցանցերում էլեկտրական էներգիայի հաշվառման համակարգի ավտոմատացման աշխատանքներից	**81.999**
3.1.5	Սարքավորումների արժեքից նվազեցումներ (շուկայական գները գերազանցելու պատճառով)	**162.039**
ա.	ԿՍՕ, ՅԱՌՎ, ՎՌՈՒ, ՇՌՍ, ՇՉՕ, ԼՏԵ, ՏՄ և այլն	113.015
բ.	Էլեկտրոնային բազմասակագնային հաշվիչներ և հաշվիչի արկղեր	49.025
3.1.6	Կապալառու ընկերությունների կողմից իրականացված աշխատանքների արժեքից նվազեցումներ նախահաշվային տոկոսների կիրառման պատճառով	**209.579**
3.1.7	Նախագծման աշխատանքներից նվազեցումներ	**14.888**
3.1.8	Համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցող ներդրումներ	**9.180**
ա.	Ենթակայանի անվտանգության պարագաների ձեռքբերում	1.625

բ.	Եռաֆազ հաշվիչի համար 1 տեղանոց արկղերի տեղադրում	0.668
գ.	Միաֆազ հաշվիչի համար 2 տեղանոց արկղերի տեղադրում	4.096
դ.	Գրասենյակային գույքի ձեռքբերում	2.791
3.1.9	Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքում իրականացված ներդրումներից	**25.907**
3.1.10	Անհետաձգելի աշխատանքներից նվազեցված ներդրումներ	**42.277**
3.2	Նոր բաժանորդների միացման համար գանձված միացման վճարներ	**692.804**
4	**2013 թվականի ընթացքում իրականացրած ներդրումներից հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը**	**4 035.701**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ընկերության 2013 թվականի ներդրումային ծրագիրը կատարվել է 83,37%-ով: Սակայն ներդրումային ծրագրի հիմնական ուղղություններով նախատեսված ներդրումների ծավալները էական փոքր են եղել նախատեսվածից: Մասնավորապես, սպառողների սպասարկման որակի բարելավման ուղղությամբ ներդրումների իրականացման ցուցանիշը կազմել է 66,53%: Ընդ որում, որևէ էական աշխատանք չի իրականացվել թույլատրելի սահմաններից էլեկտրաէներգիայի լարման շեղման միջին հաճախության և տևողության կրճատման, ինչպես նաև հատուկ ծրագրերի իրականացման ուղղությամբ: Ուստի Ընկերությունը ներդրումների իրականացման առաջնահերթության հարցում պատշաճ մոտեցում չի ցուցաբերել: Այս խնդրի լուծման նպատակով Ընկերության հաջորդ տարիների ներդրումային ծրագրի համաձայնեցման ընթացքում արդեն իսկ կիրառվել են համապատասխան քայլեր՝ ներդրումներն ըստ առաջնահերթությունների իրականացնելու համար:
2. Ընկերության կողմից հանձնաժողով ներկայացված ֆինանսական հաշվետվությունների համաձայն, վերջինիս անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվների արժեքը 2013 թվականի սկզբին կազմել է 2 956.72 մլն դրամ: Տարվա ընթացքում այն աճել է 1 993, 17 մլն դրամով՝ տարեվերջին կազմելով 4 949,89 մլն դրամ, կամ շահագործման հանձնված հիմնական միջոցների արժեքի (6 443,44 մլն դրամ) շուրջ 77%-ը: Եվ սա այն դեպքում, երբ ընկերությունը գտնվում է բավական ծանր ֆինանսական դրության մեջ (ինչը նաև փաստված է Էրսնթ ընդ Յանգ աուդիտորական ընկերության՝ 2013 թվականի համար ներկայացրած անկախ աուդիտորական եզրակացության մեջ), որի պարագայում ծախսերի արդյունավետության բարձրացման խնդիրը պետք է հանդիսանա վերջինիս գործունեության առաջնահերթություններից մեկը: Ուստի, հարկ է եզրակացնել, որ ընկերությունում ներդրումների կառավարման գործընթացը գտնվում է անբավարար մակարդակի վրա, և ընկերությունը պետք է համապատասխան քայլեր ձեռնարկի նման ծավալի

անավարտ ոչ ընթացիկ ակտիվների կառուցվածքն ուսումնասիրելու և դրանք ողջամիտ ժամկետներում շահագործման հանձնելու նպատակով:

2014 թվականի առաջին եռամսյակի ընթացքում 0,4 և 6(10) կՎ լարման ցանցերում հրաժարումների քանակը 2013 թվականի նույն ժամանակաշրջանի հետ համեմատ 25 %-ով նվազել է, ինչը դրական երևույթ է: Աստիճանաբար բարելավվում է նաև Ընկերության կողմից Հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության որակը: Առավել հստակ տեղեկատվություն ստանալու համար անհրաժեշտ է Ընկերության բազայում իրականացնել համապատասխան փոփոխություններ:

3. 2013 թվականի ընթացքում էլեկտրական ցանցին են միացվել 4261 նոր սպառողներ, ևս 175-ի միացման աշխատանքներն ավարտվել են և ներկայացվել են էլեկտրամատակարարման պայմանագիր կնքելու առաջարկներ: Նոր սպառողների միացման նպատակով 2013 թվականին փաստացի շահագործման են հանձնվել 3 996,26 մլն դրամի հիմնական միջոցներ: Սակայն հանձնաժողով ներկայացվող՝ նոր սպառողների միացման գծով իրականացված ծախսումների վերաբերյալ տեղեկավության համաձայն, մատակարարման պայմանագիր կնքած սպառողների մասով Ընկերության իրականացրած ներդրումները կազմել են 3 177,74 մլն դրամ (հաշվի են առնված Ընկերության կողմից ներկայացված հիմնավորումները՝ մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկ ստացած, սակայն չկնքած բաժանորդների և 21.57 մլն դրամի ճշգրտումների վերաբերյալ), կամ 818,52 մլն դրամով ավելի պակաս: Ուստի Ընկերության կողմից արդեն իսկ ծախսված 818,52 մլն դրամի ներդրումները՝ լինելով ավարտված, չեն մասնակցում լիցենզավորված գործունեությանը: Եվ սա այն դեպքում, երբ Ընկերությունը մշտապես մտահոգություններ է ներկայացնում նոր սպառողների միացման ուղղությամբ կատարվող ներդրումների մեծության մասին: Այսպիսի պատկերը ցույց է տալիս, որ Ընկերությունն առաջին հերթին պետք է բարձրացնի միացման նպատակով իր կողմից կատարվող ծախսերի արդյունավետությունը, իսկ խնդրի առաջնահերթ լուծումը Ընկերությունում այս գործընթացի կառավարման արդյունավետության բարձրացումն է:

4. Ընկերության կողմից ձեռք բերված սարքավորումների և աշխատանքների գների մոնիթորինգը ցույց է տալիս, որ գնումների ոչ արդյունավետ կազմակերպման արդյունքում Ընկերության կողմից ձեռք բերվող ապրանքների և ծառայությունների գները 14%-ից 20%-ով գերազանցում են շուկայականը, իսկ որոշ դեպքերում դրանք հասնում են 40%-ի: Նշվածը հետևանք է գնումների գործընթացի անարդյունավետ կազմակերպման, և այն խոչընդոտների, որոնց արդյունքում արտաքին շուկաներում Ընկերության պահանջարկին համապատասխան ապրանքներ արտադրող կազմակերպությունները Ընկերության կողմից իրականացվող մրցույթներին հիմնականում չեն մասնակցում: Միևնույն ժամանակ, նյութերի և սարքավորումների մի մասը ձեռք է բերվում ոչ թե Ընկերության, այլ կապալառու կազմակերպությունների կողմից, ինչն իր հերթին հանգեցնում է ապրանքների՝ բարձր գներով ձեռքբերմանը:
5. Շահագործման հանձնված հիմնական միջոցներից Ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացվել են 6 257,62 մլն դրամի ներդրումներ, որոնցից 1 646,76 (ընդհանուրի 26,32%-ը) մլն դրամի ներդրումները համարվել են ոչ արդյունավետ կամ դեռևս լիցենզավորված գործունեությանը չմասնակցող և չեն ներառվել սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում: Հարկ է նշել, որ ներդրումների՝ նման ծավալի նվազեցումները կրում են պարբերական բնույթ, սակայն Ընկերության կողմից գործուն միջոցառումներ չեն ձեռնարկվում Հանձնաժողովի կողմից մատնանշված թերությունները և խախտումները վերացնելու ուղղությամբ: Արդյունքում, ոչ միայն «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն զրկվում է իր կողմից իրականացված ներդրումների դիմաց վերադարձ ստանալու հնարավորությունից, այլև այդ գումարները արդյունավետ ծախսելու պարագայում՝ հնարավոր տեխնիկական և տնտեսական այլ օգուտներից: Հարկ է նաև փաստել, որ այդ հանգամանքը նույն պատճառներով իր բացասական ազդեցությունն է ունենում սպառողների սպասարկման որակի վրա և բաշխման համակարգի բնականոն զարգացման վրա: Ուստի կարծում ենք Ընկերությունը նոր ջանքեր պետք է գործադրի իր կառավարման

արդյունավետությունը բարձրացնելու և նման անարդյունավետ ծախսերը բացառելու նպատակով:

Հղումներ օգտագործված նյութերին

Որոշում 1- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 19-ի №531Ա որոշումը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2013-2015 թվականների ներդրումային ծրագրին համաձայնություն տալու մասին»

Որոշում 2- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 4-ի №427Ա որոշումը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2013 թվականի ճշգրտված ներդրումային ծրագրին համաձայնություն տալու մասին»

Հաշվետվություն 1-«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 2013 թվականին իրականացված փաստացի ներդրումների վերաբերյալ ընկերության 2014 թվականի մայիսի 12-ի №04-ԵԲ-05/1881 գրությամբ ներկայացված հաշվետվություն

Տեղեկատվություն 1- «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 2013 թվականին նոր սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման նպատակով իրականացվող ծախսումների վերաբերյալ ընկերության 2014 թվականի մարտի 21-ի №04-ՎՍ-05/1087 գրությամբ ներկայացված տեղեկատվություն

Տեղեկատվություն 2- Սպառողների հոսանքազրկումների քանակի և տևողության հաշվարկային ցուցանիշների 2013 թվականի տեղեկատվական բազա (http://psrc.am/am/?nid=391)

Տեղեկատվություն 3- Սպառողների մոտ թույլատրելի սահմաններից էլեկտրական էներգիայի լարման շեղման դեպքերի քանակի և տևողության հաշվարկային ցուցանիշների 2013 թվականի տեղեկատվական բազա (http://psrc.am/am/?nid=391)

Տեղեկատվություն 4- Էլեկտրակայանքների հուսալիության փաստացի ցուցանիշների 2013 թվականի տեղեկատվական բազա (http://psrc.am/am/?nid=391)